

ՌԵԳԻՍՏՐԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Որպես ռեգիստրար կարող են հավատարմագրվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք:
(1-ին կետը լրաց. 19.12.2023թ. N 13L որոշում, փոփոխ. 07.11.2024թ. N 14L որոշում)
2. Որպես ռեգիստրար հավատարմագրվելու ցանկություն ունեցող անձը հավատարմագրման համար ներկայացնում է գրավոր դիմում:
3. Որպես ռեգիստրար հավատարմագրվելու ցանկություն ունեցող անձի դիմումը պետք է պարունակի՝
 - 1) այդ անձի լրիվ, իսկ առկայության դեպքում նաև՝ կրճատ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն), գործունեության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, գործադիր մարմնի (գործադիր մարմնի ղեկավարի) հեռախոսահամարը,
 - 2) նշում ինտերնետային կայք ունենալու և ինտերնետային կայքի անվան մասին, ինչպես նաև նշում այն մասին, որ ռեգիստրար դառնալու ցանկություն ունեցող անձը տեղյակ է, որ որպես ռեգիստրար հավատարմագրվելուց հետո մինչև ռեգիստրի առևտրային օպերատորի հետ համապատասխան պայմանագիր կնքելը պարտավոր է այդ կայքում ունենալ դոմենային անունների առցանց գրանցման ու սպասարկման համակարգ, որը պետք է առնվազն ունենա անձնական էջ բացելու, դոմենային անուն գրանցելու, դոմենային անուն վերագրանցելու, դոմենային անվան գրանցողի վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտների տվյալների (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) պահպանման և փոփոխություն կատարելու, դոմենային անունը գրանցելու կամ վերագրանցելու համար անհրաժեշտ գումարը վճարող անձի տվյալների (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) պահպանման, դոմենային անվան համակարգի սերվերի փոփոխություն կատարելու հնարավորություն,
 - 3) ցանցային հասցեների (IP հասցեների) ցանկը, որի միջոցով պետք է ապահովվի աշխատունակությունը ռեգիստրի ինտերֆեյսի հետ,
 - 4) տեղեկություններ վարչական (ադմինիստրատիվ), ֆինանսական և տեխնիկական կոնտակտ համարվող անձանց մասին (անուն, ազգանուն, բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե),

- 5) նշում լուծարման գործընթացում չգտնվելու, սնանկ ճանաչված չլինելու և սնանկության վարույթում չգտնվելու մասին,
- 6) նշում www.amnic.net և www.isoc.am կայքերում հրապարակված՝ դոմենային անունների գրանցման գործընթացը և դոմենային անունների հետ կապված այլ հարաբերությունները նկարագրող նյութերի հետ ծանոթացած լինելու մասին,
- 7) որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրար հավատարմագրվելու մասին խնդրանք (այն դեպքում, երբ անձը ցանկանում է դառնալ նշված տիրույթներից որևէ մեկի ռեգիստրար նշվում է համապատասխան դոմենային անունների տիրույթը),
- 8) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը,
- 9) այդ անձի գործադիր մարմնի (գործադիր մարմնի ղեկավարի) ստորագրությունը,
- 10) դիմումը կազմելու ամսաթիվը, ամիսը, տարին:

(1-ին կետը լրաց. 19.12.2023թ. N 13L որոշում, փոփոխ. 07.11.2024թ. N 14L որոշում)

4. Որպես ռեգիստրար հավատարմագրվելու ցանկություն ունեցող անձի ներկայացրած դիմումին պետք է կցված լինի այդ անձի պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը: